Լաւ ուրեմն, մարմնի մը զանգուածին քանակը կը հասկնանք, առաջ եկած արդիւնքէն, ենթադրե՛նք, կշռորդի մը վրայ ըրած ազդեցութենէն։ աւելցնե՛նք արագութիւնները և ահա՛ տեսանելի զանգուածը կ'աւելնայ։ Այս է արդի բնագիտութեան երեւութապէս տարօրինակ եզրակացութիւնը։ Ժամանակակից գիտութիւնը, մարմիններու գոյացութեան լաւ ևս հմտանալու և զանգուածի գաղտնիքին խորը թափանցելու համար զանոնք հերձատելու մանրահատելու ջանացած ստեն կը տեսնէ ահա՛ որ այս էականութիւնը (զանգուածը) ևս պատահում մըն է, եղանակ մը, վիճակ մը։ Հիմայ հարկ է խնդիրը ուրիշ կողմէ պեղել և արագութեան վրայ ճառել, ուստի միջոցի և չարժումի տեսութիւն մը պէտք է։ Բնագիտութիւնը իրեն հետեւողները, անոնց կամքին հակառակ, կը մղէ իմաստասիրութեան սահմանները և կը խոյացնէ դէպի բնազանցութեան քարձուէքները։ զորժը արդարեւ զուարճալի կը դառնայ, որովհետեւ Գալիլէոսէն ու Ռօժէ Պագոնէն ասդին, բնագէտները իրենց անպատուութիւն կը համարին բնազանցութեան մօտենալ։

Եւ իրօք, անոնք որ առանց տատամսելու մտան այս արդիւնաւէտ ճամբուն մէջ,

յանգեցան ծայրաստիճան շահեկան եզրակացութիւններու, զորոնք այս տեղ կ'ամփոփեմ։

Հաւասար երեւոյթներու ամբողջութենէն պէտք է հիմայ հետեւցնել որ գիտութիւնը թէ և բոլորովին չէ հասած այն հորիզոնին որ իրեն կը վիճակի, սակայն ապագային մէջ պիտի չկրնայ կտրել անցնիլ ինչ ինչ սահմաններ առանց իր փորձառական շրջանակէն ելլելու։ Կարելի է, արդարեւ, ցոյց տալ որ մարդը երբէք չպիտի կրնայ յաջողիլ պատկերացնելու ճիշդ ձեւը նիւթի վերջին մասնիկներուն յարակցութեան։ մեր նկարները արժէք ունին միմիայն երբ կը ներկայացնեն առարկաներու թանձր կոյտեր։ անոնք իրականութեան հետ յարաբերութիւն ունենալէ կը դադրին երբ կ'իջնենք անուանօրէն փոքր աշխարհին մէջ։ Նիւթին ներքին կազմութիւնը՝ մեզի համար միշտ գաղտնիք մը պիտի ըլլայ, որովհետեւ միշտ դուրս պիտի մնայ մեր զգայարանաց ենթարկելի իրերու սահմանէն։

Հիմայ յետսահայեաց ակնարկ մը ձգեցէ՛ք։ քառորդ դարէ ի վեր ի՛նչ ճամբայ կտրուեր է։

Շատ հեռացած չենք այն ժամանակէն ուր նիւթապաշտներ—ինչպէս գերման դըպրոցիները, Պիւխնէր, Մոլէսքոթ ևայլն, կամ զրապաշտներ, ինչպէս Օկիւսթ Գոնթ, կը պարծէին որ ամբողջ տիեզերքը վերածած են մեքենական, նիւթական, ներկայացուելիք շարժումներու։ Ասոնց յաջորդները նոյն իսկ իրաւունք չունին ազդակելու բանաստեղծին հետ։

Այն ժամանակն անցաւ զրնաց, քերես ցորեմ եւ դառնայ։

Ո՛չ, այլևս ետ պիտի չդառնայ։ արդի գիտութիւնը հաստատեց զայս անտեղիտալի և յորդաւատ փաստերով։ Կը հասկնանք թէ նիւթին պոտտահումներուն ետեւը կան իրական բայց անբերելոյք ուժեր, որ նիւթական գոյացութեան հիմը կը կազմեն։ քանի որ այս ուժերը կը խուսափին և մըշտ պիտի խուսափին մեր զգայարաններէն, ի՛նչ իրաւունքով կրնանք ուրանալ այն ուժերը

որոնցմով երեւան կու գան անսիրտ գոյա-
ցութիւնները, ինչպէս մեր հոգին. և այն
միւս ուժը, որուն ներգործութիւնը անգա-
դար կը զգանք բնութեան մէջ, այն գերա-
զոյն ամենակարող ուժը, որ արարածներուն
կու տայ անոնց օրէնքները, անոնց շար-
ժումները, կեանքը, և մինչև իսկ գոյու-
թեան պատճառը:

Այս գիտութեան, այսինքն պատճառնե-
րու հետազոտութեան միջոցաւ Աստուծոյ
գոյութեան յայտնութիւնը՝ միթէ ամէն կեր-
պով չ'ըրգործէր Առաքեալին խօսքը, որ
մեզի կը ստիպեցնէ թէ տեսանելի իրերու
միջոցաւ հասնելու ենք անտեսանելի իրե-
րու: Այս հետեւութիւնը, զոր նախատեսած
չէին նիւթին կազմութեան հետազոտիչ գի-
տունները, ստուգիւ արդի բնագիտութեան
ամենէն փառաւոր տիպողոսներէն մին է:

Ա. Թ. ՄՕՐԷՕ

ՏԷՐ ԻՄ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԻՄ

(Ս. Յովհ. Գլ. Ի.)

Տէ՛ր, չէ՛ թէ թովմաս Առաքեալին պէս
Տեսնեմ ու դպչիմ, եւ հաւատամ ես.
Քաւ սուրբ խորհուրդներդ չեն գործ պատահման,
Այլ անգրաւ պրօուղ՝ սիրոյ մօտեցեան:

Բանկանութիւնս թէ խեղճ, կարճամիտ՝
Զոմբունք Բեզ, Տէ՛ր, սակայն կ'ըզգայ սիրս
Քեզ մօտ մընալով, եւ Բեզ փարի յար.
Տէ՛ր իմ եւ Աստուած, կ'սէ խոնարհաբար:

Երբոր Սուրբ նեխար Սեղանին վրայ՝
Խոնարհ նակասուս վերեւ բարձրանայ,
Ըզբեզ կը տեսնեմ, եւ յափրօտակուած
Քու հով կը թուչի հոգիս, ո՛վ Աստուած:

Ո՛հ, այն հուսափով վառուած սիրս անեղ՝
Ըրէ՛ որ Քեզ գայ օր մ'ալ Դրախտին մէջ.
Ես Քեզ պիտէ՛ քսեմ հոն մօտածաղ
Տէ՛ր իմ եւ Աստուած, սուրբ սիրով աննուաղ:

Մ. Ծ. Վ. Մ.

(Իսայ. Թարգմ.)

Ս. ՊԵՏՐՈՍ ԵՒ ՊՕԼՈՍ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՕՆԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

(Վսեմաշուք Պիյեոյ Կարդինալին 1912 Յուն-
ուար 18ին խօսած սքանչելի ճառէն կը թարգմա-
նենք հետեւեալ հատուածը:)

Ինչ կը նշանակէ Պօղոսի Հռոմ գտնուի-
լը. Ան Հռոմէական Եկեղեցիին հիմնադիրը
չէ: Իր Հռոմայեցոց ուղղած թուղթին մէջ
չատ որոշակի կը յայտնէ որ Հռոմէական Ե-
կեղեցին արդէն հիմնուած է. արդէն բար-
գաւած է. որովհետեւ թոյր աշխարհի մէջ
անոր հաւատքին վրայ կը խօսուի. եւ նոյ-
նին մէջ ցոյց կուտայ նաեւ իր Հռոմ գալու
մեծ փափաքը: Այս Առաքեալին կեանքին
մէջ եղական իրողութիւն մը կայ: Ս. Պօղոս,
և այս բանիս համար շատ անգամ կը պար-
ծենայ, բնաւ սովորութիւն չունէր ուրիշնե-
րուն մըցորդ ըլլալու կամ ուրիշներուն
ցանածը հնձելու: Իրեն կը վերապահէր,
ինքն իսկ է որ կ'ըսէ, այն կողմերը որ տա-
կաւին քարոզուած չէր Աւետարանը, Ինչո՞ւ
Հռոմի համար այս միակ զարտուղութիւնը
կ'ընէ: Ինչո՞ւ այնքան եռանդով կը փափա-
քի գալ ինչ ինչ գերդնական պարգեւներ հա-
ղորդել այս արդէն հիմնուած և երեւելի Ե-
կեղեցւոյն:

Որովհետեւ Հռոմի Եկեղեցին հատարակաց
պայմաններուն մէջ չէր և ըլլալու չէր: Ս.
Պետրոս այն տեղ հաստատած էր իր աթոռ-
ը, գերագահութեան աթոռը, Աստուծոյ
մարդոց մէջ յարատեւ առաքելութեան վայ-
րը, միութեան կեդրոնը ուր քահանայու-
թիւնը պիտի գտնէր իր աղբիւրը և սկիզբը,
միջակէտը ուսկից պիտի ճառագայթէր հա-
ւատքի միութիւնը, ուսկից պիտի իջնէր ա-
մէն օրինաւոր իշխանութիւն:

Պատշաճ էր որ Հռոմ, իր գերագահու-
թեամբ և իշխանութեամբ արդէն այնքան
բարձր, աւելի ևս գերիվերոյ ըլլար իր ա-
ռաքելական ծագման գերազանց հանգաման-
քովը: Ահա ասոր համար ի դէպ էր Ս. Պօ-
ղոսի աջակցութիւնը:

Սուրբ Պօղոս գերազանցօրէն Առաքեալ
է: Ուստի ինչ որ առաքելական է, այս տեղ

կեդրոնացաւ։ Ս. Պօղոս առաքելութեան զլիաւորութեան մէջ իր բաժինը ունէր։ Ս. Հարց խօսուածքին համեմատ Ս. Պետրոս և Ս. Պօղոս Առաքելոց իշխաններն են, զըլխուն երկու աչքերը։

Եթէ Ս. Պետրոսի կը պատկանի առաջագահութիւնը և իշխանութիւնը, կրնանք ըսել որ Ս. Պօղոս ունի առաքելութեան առաջնութիւն մը, արդիւնք իր կողմին եղական հանգամանքին, իր նոյնինքն յարուցեալ Բրիտոսի կողմէ հրահանգուելուն, իր աշխատութիւններուն, որոնց մէջ միւսներէն աւելի անձնազոհութիւն ցոյց տուեր է։ Կակիրձ, մեծագոյն մասնակցութեան մը այն պարգեւներուն որոնք յատկանշեցին Աւետարանի առաջին ծաւալումը և հեթանոս աշխարհի դարձը։ Ս. Պօղոս թուայաւել առաքեալ մըն է, բայց միւս ամէնը կը զլէ կ'անցնի։ Եւ երբ Առաքեալը ըսենք, ամէն մարդ Ս. Պօղոսը կը հասկնայ։

Ս. Պօղոս սեփական աթոռ ունենալու չէր։ Եթե մեծ էր իր գերազանցութիւնը որ իր յաջորդները պիտի կրնային Պետրոսի յաջորդներուն մրցակից հանդիսանալ։ Ասոր համար Նախախնամութիւնը անոր կու տայ իբրեւ Պետրոսի աջակցի դերը։ Ան Հոռոմ է Ս. Պետրոսի հետ, բայց իբրեւ երկրորդական անձ։ Երբ հոն կու գայ, նոյն սեղը իրմէ մեծի մը կողմէ արդէն գրաւուած կը գտնէ։ Նախախնամութեան ծրագիրն էր որ անոր առաքելութիւնը Հոռոմի մէջ վերջանայ եւ հոն խառնուի Պետրոսի գերիշխանութեան հետ, ինչպէս հեղեղ մը որ լերան մէջէն խայտանքով խոյանքով անցնելէ յետոյ, կու գայ դաշտոտագ գետին կանոնաւոր հոսանքին հետ կը խառնուի, կ'անհետանայ։

Ս. Պետրոսի վկայութեան ընկերանալով, միեւնոյն տեղը մնանելով, Հոռոմէական Եկեղեցւոյն կու տայ առաքելականութեան ամենէն պայծառ փայլը, Պետրոսի աթոռին կը մատուցանէ յարգանքի ամենէն հանդիսաւոր հաւաստիքը։

Ո՛րքան մեծ, յարգոյ, սիրելի կ'երեւի ինծի Ս. Պետրոսի Աթոռը։ Երեսու Բրիտոս զայն պարզարեւու համար անոր տուաւ ամենէն

չքեղ նշանները։ Բանալիներ որ կը բանան, ի՛նչ բան.—երկինքը։ Կովուական ցուպը որ կը տանի, ո՛ւր,—յաւիտենական արօտները։ Ուռկանը, որ կը հանէ, ուսկի՛ց.—անդունդէն։

Այս նշանները ցոյց կու տան այն փրկութեան առաքելութիւնը որ յատկապէս Յիսուսի Բրիտոսի կը վերաբերի և զոր նա յանձնած է Ս. Պետրոսի եւ անոր յաջորդներուն։

Մարդիկ պիտի գան եւ ուրիշ մարդոց պիտի ըսեն. մեզի՛ հետեւեցէ՛ք, Մենք պիտի պատասխանենք Տէրաւոր զրահոսի, Ս. Օպտատի, Ս. Իրենէոսի հետ, անոնց ժամանակին հերետիկոսներուն։ «Որո՞նք անունով կը խօսիք։ Դուք առաքելական աթոռին չէք պատկանիր։»

Մեզի համար, խնդիրը պարզ է։ Մենք հաղորդակից եւ հպատակ ենք Ս. Պետրոսի աթոռին, Ս. Պետրոսի, որ ինք միայն երկինքը բացող բանալիները ունի, գառները եւ ոչխարները արածելու առաքելութիւնը առած է, հոգիներու որսը արդիւնաւոր ընող օրհնութիւնը կ'ընդունի։

Այո՛, Եկեղեցին որսանաւակ մըն է, ո՛չ աւելի, ո՛չ պակաս։ Բայց հրաշալի որսերը միմիայն Ս. Պետրոսի նաւակին մէջ տեղի կ'ունենան։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԼԱՒԻ ԽՕՍԻ ԼԱՒԻ ԳՈՐԾԻ.— Լիկեոնի մէջ պարգեւաբաշխութեան ժամանակ այլեւայլ գրքերու մէջ կը գտնուէին շատ մը անբարոյական ու անկրօն գրքեր ալ, ինչպէս Սթրաուս, Բընան, Էն. Էն. Կոմսի մը գաւակին վիճակեցաւ աս տեսակներէ երկու հատ։ Պատանեակը, որ գաւակ էր ճշմարտապէս քրիստոնեայ ընտանիքի մը, գրքերը սնորէնին ետ զրկեց, շատ ազնիւ նամակ մըն ալ գրելով մերժումին համար։ Տնօրէնը բարկացած, պատանեոյն հօրը գրեց պախարակելով սղան, ջատագովելով ինքիւնքը և ըսելով թէ գիտութիւնը մըշտ աւելի կը

սեղմէ հաւատոյ հողը և թէ ինքը կը պարտէր միշտ աւելի տարածել ազատական գաղափարները, վերջապէս կ'ազաչէր հօրը որպէս զի իր զաւակին խիստ դաս մը տայ:

Հայրը սակայն սա'պէս պատասխանեց անօրէնին. «Փոխանակ խիստ դաս մը տալու իմ սիրելի զաւակիս՝ որ խղճով բարեկարգ ոչակերտ մըն է, և արիւնով կատարեալ ճեմքովան, կու տամ անոր համարյոք մը որ կ'իլլէ հօր մը սրտէն որ կը պարծի աշակերտի նկարագրի և արժանապատուութեան տէր զաւակ մ'ունենալուն վրայ: Եթէ ես նիւթապաշտ մը ըլլայի, ձեզմէ իրրեւ նիւթապաշտ հատուցում պիտի ուզէի. բայց իբրեւ կաթողիկէ, կը մաղթեմ ձեզ իմինիս պէս անբարեկիրք ու աւելորդապատէ զաւակ մը, և քնաւ առիթ չպիտի ունենաք լալու, ինչպէս այնքան հայրեր:

ԿԱՌՈՂԻԿԷ ԳԵՐՄԱՆԻԱ. — Բրուսելոյ թաղաւորութեան մէջ կան 12 եպիսկոպոսական աթոռներ, որոնց երկուքը արքեպիսկոպոսական են Գոլոմիա (որուն վիճակակից են Թրէվ, Միւնսթեր և Բանտերպորն) և Կնէզըն-Բոգըն, Պրեսլաւիոյ վիճակը (Պրանտէպուրկի և Բուէրանիոյ նուիրակութեան հետ). ազատ վիճակներն էրմանտի, Հիլտէսհայմի, Օմնապրուքի, որուն կցուած է առաքելական վերատեսչութիւն (préfecture apostolique) Շլէսվիք—Հօլշթայնի և առաքելական փոխանորդութիւն (vicariat apostolique) Հիւսիսային Գերմանիոյ. վերջապէս Ժուլտայի և Լիմպուրկի թեմերն և բանակին ու տորմիդին եպիսկոպոսը որ կը նստի ի Պերլին: Գրեթէ ամէն թեմականներն ունին օգնական եպիսկոպոս. որով ամէնուն թիւը կը հասնի 21ի: Ամենէն երիտասարդն է Բաուէրպորնի եպիսկոպոսը և ամենէն ծերը սուր օգնականը, որով այս թեմը երկու ծայրերը կը միացնէ:

Գերմանական միւս պետութեանց մէջ 14 թեմեր կան. Պաւիէրայի մէջ երկու արքեպիսկոպոսական աթոռ, Միւնիխ—Ֆրայզինկ՝ երեք վիճակակից թեմերով, և Պամպէրկ՝ նոյնպէս երեք թեմերով. ի բարձրա-

գոյն Հռենոս Ֆրայպուրկի արք. աթոռը, երկու վիճակակից թեմերով, Ալզաս—Լորէնի մէջ Մէցի և Սթրասպուրկի թեմերը, վերջապէս Սաքսոնիոյ առաքելական փոխանորդութիւնը և Լաուզիցի առաք. վերատեսչութիւնը:

ՍՐՏԻ ՈՒ ԽՂՃԻ ԶԱՅՆԸ. — Օրիորդ մը մահամերձ վիճակի մէջ կը գտնուէր, և կը թուէր թէ հազիւ քանի մը վայրկեան միայն մնացեր էր կեանքի: Կոչել տուաւ իր հայրը՝ որ անհաւատ էր, և սեղմելով անոր ձեռքը.

— Սիրելի հայրիկ, ըսաւ, քանի մը վայրկեանէն ես պիտի մեռնիմ. ըսէ՛ ինծի խնդրեմ, ըսէ՛ լրջօրէն, թէ ես պէտք է արդեօք որ քու մինչև ցարդ իմ ալ առջեւս ըսածներուդ հաւատամ, այսինքն թէ՛ չկայ Աստուած, չկայ արքայութիւն և ոչ դժոխք. և կամ թէ արդեօք պէտք է որ մայրիկիս ինծի սորվեցուցած քրիստոնէական վարդապետութեան աւելի միտ դնեմ:

Հայրը ցնցուեցաւ՝ իբրեւ թէ շանթահար եղած ըլլար. յետոյ հոգեվար աղջկանը ալ կանչին յենլով.

— Սիրելի աղջիկս՝ ըսաւ հեկեկաձայն, հաւատա՛ միայն անոր զոր քու մայրիկդ սորվեցուց քեզ:

ՄՏԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ. — Խեղճուկ քրիստոնեայ կին մը կը զառնար Լուրտի Աստուածածնայ ուխտապնացութենէն: Ինքնահաւան և թուլամորդ կատակաբան մը ծաղրելով ըսաւ անոր.

— Ըսէ՛ ինծի, բարի կնիկ. Աստուածամայրը երեւցաւ քեզի:

— Այո՛, պարոն, ըսաւ ուխտաւոր կինը, Աստուածամայրը երեւցաւ ինծի. և ո՛չ միայն ինքը, այլ նաեւ Բեթզէէմի ախոռին ամբողջ ընտանիքը: Պակաս էր միայն էշը. հիմա ան ալ կ'երեւի ինծի:

ԱՐԴԻ ՊԱՅԹՈՒՑԻԿՆԵՐՈՒ ՈՅԺԸ. — Արդի 305 աչափ խոշոր թնդանօթներուն իւրաքանչիւրը հինգ հարիւր քաշ կշռող պողպա-

տեայ ահաւոր ռումբերը կը նետեն մինչեւ
ճասն ու վեց փլումերք։ Ասանց այժը առաջ
կու գայ գլխաւորաբար պերագանցապէս պայ-
թող նիւթերու պործածութիւնէն, որոնք
գրեթէ ամէնքը կը ծաւլին նիբրոկլիստերինէն
(բորա քաղցուէն)։

Ուժանակը (dynamite) եթէ ամբողջո-
վին գոցուած տուփի մը մէջ պայթելու ըւ-
լայ, հոն ուր հազար միջնորդարի ստակալի
ժնշումը առաջ կը բերէ։ Վերոյիշեալ 305ա-
չափ թնդանօթները լեցնելու համար մինչեւ
150 քիւօ տինամիթ կը գործածուի, և այն
500 քիւօ կը ռող ռումբերուն ի սկզբան անդ
ամէն երկվայրկեան 870 մէթրի ապշեցու-
ցիչ արագութիւնը կուտայ։

Մակելու համար գործածուած ռումբերը
կարող են ծակել մինչև իսկ 30—40 հարիւ-
րորդամէդր թանձրութիւն ունեցող ամենա-
խիստ պոզպատէ շինուած զրահները։

Այս 305աչափ թնդանօթներուն պայթումը
կը նմանի երկրաշարժի և մրկի երերախառն
մոնչիւնին՝ ահեղափայլ բոցավառութիւն մը
կը խուժէ դուրս, և ակնթարթի մէջ մէկ
քիւօմէթր վազող երկաթեղէն կամ կապա-
րեղէն մահաբեր տարափ մը հարիւրաւոր
միգրներով շրջակայքը կ'աւլէ, կ'աւերէ։

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՍ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.— Լուրտի
Ս. Հ. Համաժողովին քահանայապետական պատուի-
րակ անուանուեցաւ Վսեմ. Կրօնիչոյ տի Պելմոնդէ
կարդինալը՝ Ն Վսեմ. Տէրութեան պիտի ընկերա-
նան Լեզուա Գերապայծառը, Սաստի տի Պիանքի
կոմսը և Գամիլ Պելլէկ։

Պալատինայի մէջ (Գերմանիա) վերջերս կա-
թողիկէ, ժողովրդական, մեծ գումարում մը տեղի
ունեցաւ՝ բաց օգի մէջ։ Սղորսպուրկէն, Մէցէն, Մա-
յանտէն, Ֆրիպուրկէն 15000էն աւելի մարտիկ կա-
թողիկէներ ներկայ էին։

Այսիս աը Լովէնսթայն իշխանը երկար ճառ մը
խօսեցաւ կաթողիկէից Եկեղեցոյ՝ առաքելութեան
օգնելու պարտքերուն վրայ։

Մէցի քաղաքապետական ժողովին անդամ
փաստարան Մ. Էանէսը խօսեցաւ անկրօնութեան և
յեղափոխութեան վրայ զօրս կ'արծարծեն ազատա-

մոյ, որմնադիր և հակաքրիստոնէական թերթերը։ Յոր-
դորեց բոլոր ներկաները որ երբէք թոյլ չտան որ ան-
շարոյական կամ հակակրօն թերթեր մուտք գտնեն
իրենց տներուն մէջ։

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ.— Յուլիս
կին Ամեն Գերեջանիկ Հոգեւոր Տէրը, ընկերակցու-
թեամբ Սրհնապատիւ փոխանորդ Արքեպիսկոպոսին,
Գերջ. Թէթլիպաշեան Գերդ. Գերապայծառին, և
Գերջ. Թումայեան Յովհ. Մ. վրդ. ին ներկայ գտնուե-
ցաւ Լատինաց Բերայի Սանդա Մարիա եկեղեցիին մէջ,
Աւստրիոյ Հունգարիոյ ողբացեալ Կահաժառանգ ա-
մուկն հոգւոյն համար կատարուած հանգստեան
պաշտօնին։ Եկեղեցին համակ սեւերով ծածկուած էր
և սիւներուն վրայ կ'երեւային աւստրեւ-հունգար դի-
նանչանները։ Վեց խոշոր սեւապատ կերտներ զըն-
ուած էին եկեղեցիին դռան մէջ։ Հիւպատոսարանին
պաշտօնէութիւնը կ'ընդունէր հրաւերեալներն եկեղե-
ցիին մեծ գումանէն, իսկ ներքին դռն առջև կը
գտնուէին աւստր. դեսպանատան խորհրդակները,
հիւպատոսն և թարգմանը։ Բոլոր դեսպանները ներ-
կայ էին մեծ համազգեստով։ Սուլթանին և օսմ.
կառավարութեան կողմէ ներկայ եղան արտաքին
գործոց նախարարի խորհրդական Ռէշատ Հիքմէթ պէյ
և Բերայի կառավարիչ Սելւէյման Քեանի պէյ։ Հո-
գեհանգստի արարողութեան նախագահեց Արհի-
Սարտի, Կ. Պոլսոյ քահանայապետական Նուբարը։
Արարողութեանց աւարտելէ ետքը, Բալլավիչինի
մարքիզը ընդունեցաւ ներկաներուն ցաւակցութիւն-
ները։

— Յաջորդ օրը Աւստրիոյ Հունգարիոյ դեսպան
Բալլավիչինի մարքիզը շնորհակալութեան քառադեր
ղրկեց Ամեն. Հոգեւոր Տէրոյ և Արհի. փոխանորդ
Գերապայծառին, որ ներկայ եղած էին հոգեհանգիս-
տի արարողութեան։

Ս. Արհի. Յովհաննէս եպիսկոպոս Նաղլեան, վի-
ճակաւոր Տրապիզոնի, Յուլիս 7ին Պոլիս եկաւ և յա-
ջորդ օրը մեկնեցաւ դէպի Լուրտ։

Կիւրինի Կ. Հայութիւնը այս միջոցին տօնե-
լու կը պատրաստուի իր կաթողիկէութեան վերա-
դարձին երկդարեան յուրեանը։ Արհի. Լիւան Արք-
եպիսկոպոս Քէչլեճեան վիճակաւոր Սերաստիոյ-Նւ-
դոկոյ, Կիւրին պիտի երթայ յորդանանին հանդէսե-
րուն նախագահելու համար։

Ամեն. Հոգեւոր Տէրը այս առթիւ մասնաւոր
գրութեամբ իր խնդակցութիւնը յայտնեց Արհի-
պատիւ Քէչլեճեան Գերապայծառին ու իր օրհնու-
թիւնը շնորհեց Կիւրինի բարեպաշտ ժողովուրդին։

Յուլիս 5ին, Կիւրակի օրը, Պէոյիւք Տէրէի
Նրկոտասան Առաքելոց եկեղեցւոյն մէջ առաւուն
ձայնաւոր պատարագ և երեկոյին ժամերգութիւն
իւսփար և օրհնութիւն տեղի ունեցան առթիւ Եր-
կոտասան Առաքելոց տօնին որ Յուլիս 29էն փոխա-
գրուած էր Կիւրակի օրուան։

*** Հետեւեալը կ'ընդունինք ի հրատարակութիւն.

Նորգիւղ 3 Յուլիս 1914

Մեծաօտ Տէր

Յովհաննէս ԷՃ. Փարսեանեան

Թուղթ մը ընդունեցայ յորում շատ զարմացմամբ կարդացի թէ կատարուած բուժարկութեամբ ընտրուած եմ տեղական անդամ Աւագանւոյ Ժողովոյ:

Եթէ Ժողովուրդը անգիտակցաբար և միայն ձեր թեղաբնակութեամբ ուսուցիչի սխալ մը գործած է, գտնէ պէտք չէիք զայն վաւերացունելու աշխատիլ ձեր ստորագրութեամբ որ, յայտ, ինծի համար ու եւ արժէք մը չունի, որովհետեւ նախ այս ընտրութիւնը յոտից ցգլուխ ապօրինի և անվաւեր է, և երկրորդ՝ դուք ու եւ տխուր մը չունիք ինծի, Քահանայիս, իբր թէ յանձնուած պաշտօն մը վաւերացնելու՝ որ միմիայն սեպհական է Պատրիարքին կիւրիկիդ: Ուստի աստ ներփակեալ ձեզ կը վերագործենք թուղթը, խնդրելով որ ուրիշ անգամ ձեր ստորագրութեամբ նման թուղթեր չիրկէք ինձ:

Ընդունեցէ՛ք, Մեծաշուք Տէր, ներկայ բողոքս:

Պ. Վ. ՄԻՐՏԻՉԵԱՆ

Ժողովուրդապէս եւ Մեծ. Ս. Յով. Մկր. Եկեղեցւոյ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Ելեւմտական նախարար Ճավիտ պէյ 1330 տարւոյ ընդհ. ելմտացոյցին վրայ իր տեսութիւնները պարունակող ճառը, արտասանեց Երեսփ. Ժողովոյ Յուլիս 4ի նիստին մէջ:

Նիստը բացուեցաւ առտուան ժամը 10.35ին: Պոլիս գտնուող բոլոր երեսփոխանները ներկայ էին: Կը նախագահէր Խալիլ պէյ, Նախորդ նստի տեսնագրութիւնը կարդացուած պահուն եկան Եպարքոս Սաիտ Հալիմ փաշա, Ելմտական, ներքին գործոց, դատական և հանրաքուտ շինութեանց նախարարներն և իրենց յատուկ տեղերը գրաւեցին: Կարդացուեցաւ Աւստրիոյ և Հունգարիոյ Խորհրդարաններու նախագահներուն հեռագիրները, որոնցմով շնորհակալութիւն կը յայտնուէր Ֆրանց Ֆերսինանտ Արհիդուքսին և գ. քուսէիին եղբորական մահուան առթիւ Օսմ. Խորհրդարանին յայտնած ցաւակցութեան համար:

Նախագահի ծանոյց թէ ներքին գործոց նախարարը, որուն հաղորդած էր յաւանական գաղթականութեան մասին յոյն երեսփոխաններուն հարցազիրը, խոստացած է Յուլիս 6ին պատասխանել:

Օրակարգի առաջին խնդիրն էր ընդհ. ելմտացոյցի քննութիւնը: Ճավիտ պէյ խորին և ուշադիր լուսութեան մը մէջ բեմ յառաջացաւ և իրեն յաւանական պերճախօսութեամբ պարզեց իր տեսութիւնները ներկայ տարւոյ ելմտացոյցին վրայ: Նախարարը ժամը 10.30ին սկսելով խօսեցաւ մինչեւ կէս օր և եր-

կու ժամ՝ դադարէ ետք շարունակեց մինչեւ ժամը 4:

Ճավիտ պէյ նախորդ Խորհրդարանին լուծման պարագաներն յիշելէ ետք, խօսեցաւ 1912ի ելմտական տագնապին վրայ և նոյն տարիէն մինչև Պալքանեան պատերազմին յայտարարութեան թրւականը կընթուած ելմտական գործողութիւններուն պատմական ըրաւ:

— Երեսփ. Ժողովը Յուլիս 6ին Խալիլ պէյի նախագահութեամբ գումարուելով լսեց Ճավիտ պէյի բացատրութիւնները 1330ի ընդհ. ելմտացոյցին վրայ: Ներկայ էին Եպարքոսն և նախարարները:

Ճավիտ պէյ կառավարութեան անունով շնորհակալութիւն յայտնելէ ետք Խորհրդարանական յանձնաժողովին, որ կարճ միջոցի մէջ աւարտեց ելմտացոյցին քննութիւնը, խօսեցաւ 1330 տարւոյ ծախուց համար պահանջուած վարկերուն և նախատեսեալ հասոյթներուն վրայ, և ծափերու մէջ վերջացուց իր հոյակապ ճառը:

Կէս օրէն քիչ մը ետք դադար տրուեցաւ: Ժամը 2ին մօտ նիստը վերսկսաւ: Բոլոր նախարարները ներկայ էին: Օրակարգը կը կազմէր ներքին գործոց նախարարին յայտարարութիւնը յոյն երեսփոխաններուն հարցազիրին, յաւանական գաղթականութեան խնդրին առթիւ:

Նախ կարդացուեցաւ յիշեալ հարցազիրը:

Էլմտացոյցի ԷՃ. հարցազիրն ստորագրող յոյն երեսփոխաններուն անուամբ խօսք առնելով լուրջ և կրօնավոր ճառ մը արտասանեց: Հակառակ իրեն դէմ շատ մը երեսփոխաններու կողմէ եղած բողոքներուն և ազմակներուն իզմիր յոյն երեսփոխանը շարունակեց իր խօսքը:

Ներքին գործոց նախարար Թալէաթ պէյ երկարօրէն պատասխանեց իզմիր յոյն երեսփոխանին հարցումներուն: Նախ յիշեց պալքանեան դաշնակիցներուն անլուր խժգժութիւնները Մակեդոնիոյ իսլամ Ժողովուրդներուն հանդէպ: Գործին մէջ ու եւ շահ չունեցող անձեր հազարաւոր ոսկիներ ծախսեցին բազաբակիր շէնքերը յաւաքող վայրագութեանց լուրերը ստուգելու համար և միջազգային քննութեամբ հաստատուեցաւ ի վերջոյ թէ այս մասին եղած հրատարակութեանց մէջ ոեւէ չափազանցութիւն չկար, եւ այլին, եւ այլն:

Նախարարին յայտարարութիւնները շնորհացունեցին յոյն երեսփոխանները, որոնցմէ շատեր խօսք ուղեցին: Ասիկա աննկարագրելի իրարանցում առաջ բերաւ: Խալիլ երեսփոխաններն ալ պահանջեցին որ իրենց խօսք տրուի:

Ետմիջեւ ԷՃ. ալ խօսիլ ուղեց: Իսլամ երեսփոխան մը նախատեց զայն Էսէպիլի պոռայով անոր երեսին:

Ֆիքու ԷՃ. ուղեց յարձակիլ նոյն իսլամ երեսփոխանին վրայ, բայց Սիւլէյման Սուսուտ էՖ. ինք ալ նախատեց յոյն երեսփոխանը և անոր վրայ յարձակիլ ուղեց բայց չթողուցին:

Ժողովը Թորթեց սակայն Հայտար պէյի մէկ առաջարկը՝ հարցումը հարցապնդումի փոխելու մասին։ Քուէի դիմումելով, նախարարին յայտարարութիւնները գոհացուցել նկատուեցան ստուար մեծամասնութեամբ։ Ապա գազար տրուեցաւ, որմէ ետք Ժողովը որոշեց ձալիտ պէյի ճառը պատերաւն վրայ փակցնել։ Յետոյ սկսաւ ելմտացոյցին ընդհ. վիճաբանութիւնը։ 10ի չափ երեսփոխաններ քննադատեցին սուփամեայ օրէնքներով հաստատուած նոր տուրքերը։

— Թուրք թերթ մը կ'իմանայ թէ նկատելով որ Խորհրդարանն իր այժմուս նստաշրջանին մէջ պիտի չկրնայ աւարտել ելմտացոյցին քննութիւնը, մտադրութիւն կայ այս նստաշրջանը միացնել երկրորդին։ Բոմազանի միջոցին յանձնաժողովները պիտի շարունակեն իրենց աշխատութիւնը, իսկ Խորհրդարանին երկրորդ նստաշրջանը պիտի սկսի նոյն ամսոյ վերջերը։ Այս կերպով պիտի խնայուի երեսփոխաններուն տըրուելիք ծամբու ծախքը։

— Յուլիս 7ին Երեսփ. Ժողովը շարունակեց ընդհանուր ելմտացոյցին քննութիւնը։

Նոյն օրուան նիստին մէջ Ֆուստ Խալուսի պէյ առաջարկեց նոր տուարը ընդունել, բայց իր առաջարկը մերժուեցաւ։

Ֆորանսացի Պաման փաշա, ընդհանուր հրամանատար Արեւելեան Նահանգներուն ոստիկան զօրաց, Տրապիզոնի ծամբով Յուլիս 8ին իր պաշտօնավայրը մեկնեցաւ։

— Նոյն օրը իր պաշտօնավայրը մեկնեցաւ նաև Հայաստանի բարենորոգմանց վերահսկիչ Հօֆ պէյ իր նորվեկ, թուրք և հայ հետեւորդներով։

→ Մ. Վէսթէնէնկ ևս հաւանական է որ յառաջիկայ շաբթուս մեկնի։

Ներքին գործոց նախարար Թալէադ պէյ Երեսփ. Ժողովին մէջ յոյն երեսփոխաններու հետ ունեցած մտանաւոր տեսակցութեան միջոցին, հրաւիրեց զանանք իրենց ազդեցութիւնն ի գործ դնել

Պատրիարքին մօտ, եկեղեցիները ու դպրոցները բանալ տալու համար, վառարի այլապէս արգելքի պիտի հանգիպի իր գործը Թրակիոյ և Իզմիրի նահանգին մէջ բնականոն կացութիւն մը հաստատելու մասին։ Նախարարը յարեց թէ յոյն երեսփոխանները պարտաւոր են աջակցել իրեն. եկեղեցիներուն ու դպրոցներուն գոց մնալով կառավարութեան ջանքերը արգիւնք մը չեն ունենար։ Յոյն երեսփոխանները պատասխանեցին թէ կառավարութիւնը նախ պէտք է արձակէ քաղաքական պատճառներով բանտարկուած բոլոր Յոյները, Թալէադ պէյ խոստացաւ թէ Պատրիարքարանը եկեղեցիներուն և դպրոցներուն բացմանը ձեռնարկելուն պէս, ինք ալ պիտի հրամայէ արձակել յոյն բանտարկեալները։ Յոյն երեսփոխաններն այդ մասին պիտի բանակցին Պատրիարքին հետ։

Վիեննա 7 Յուլիս.— Ալպանիայէն հասած լուրերը շատ յուսահատական են։ Ապստամբները, ուրոց թիւը հետզհետէ կ'աւելնայ, շուտով պիտի յարձակին Տուրացոյի և Վալոնայի վրայ։ Իշխան Վիտ գրիթէ իր ամբողջ հեղինակութիւնը կ'օգտագործէ և պինդորիններուն վրայ։

Վիեննա 8.— Աւստրիացի և սերպ ընդհանուր դատախազները դատական հետապնդումի ձեռնարկեցին 12 Աքրպերու գէմ, որոնք մտադրած էին մահափորձեր կատարել յաղաղակաւութեան պահուն։ Վիեննայի մէջ յուզումն անկարագրելի է։ Այս գըժախային ծրագրին երեւան հանուելուն պատճառաւ էր որ աւստր. կառավարութիւնը խնդրեց վեհապետներէն որ Վիեննա չգան։

Մեքսիկո 3.— Նիսկարա Ծօլսի ժողովը ստորագրեց իր վերջնական բրթօքայը, որ վերջ կուտայ ամերիկեմեքսիկեան պատերազմին։ Վերա Բրուզ գըրաւուած պիտի մնայ Ամերիկացիներէն։ Հուլիս պիտի հրաժարի և նոր Խորհրդարան պիտի կազմուի մեքսիկեան քաղաքական բոլոր կուսակցութիւններէն։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	438
Ինսանի՞ մի եօզաւ Ալլահանի՞ մի	435
Հին վաւերաբուդքեր	437
Իմաստութեան սկզբանց վրայ բարոյական եւ պատմական խորհրդածութիւններ	439
Եօթնեակ Բրիտանի	440
Նիւթին խորհրդաւոր կազմութիւնը	441
Տէր իմ եւ Աստուած իմ	443
Ս. Պետրոս եւ Պօղոս	443
Ալլեւայլ	444
Տեղեկագրական	446

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎԷ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԵՆ-ԽՄԱԿՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպարան Կ. Արձագանգ Շարաքերքի, Բերա, Պայրամ փողոց թիւ 5, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ . արծ . վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ .— Արսաւան-
ման տար . ֆր . 10 . վեցամս . 5 .— Վճարմունք կանխիկ են :

ՀԱՍՑԷ .— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5 . Պայրաւ փողոց 5, 4 .

Պոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ .— 1 .— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը : 2 .— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու ե
յօդուած : 3 .— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը՝ ծանուցանել Խմբագրապետին :
4 .— Ձեռագիրները ետ չեն դարձուիր : 5 .— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թղթին մէկ կողմը մի-
այն : 6 .— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին : 7 .— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի միասին զրկել :

Տարր . Սկզբունք Քրիստ . Վարդապետութեան . գին 2 դհկն . :
Տէր Կոմիտաս Բահանային վարքը . գին 5 դհկն . :

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ . 5 : Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ է ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար : Կը տպուին ամեն տե-
աակ ծանուցմունք, զիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, բարդեր, քարդ-տարէներ,
մահազգներ, եւն . եւն . : Գիները անմիջեղի կերպով աժան են : Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
ընան :

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislau, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zittlau.*

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scutari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat et vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.